ՆԱՀԱՊԵՏ ԱՖՐԻԿԵԱՆ (լէկար)

# SUB DIVO

Հրատարակութիւն
ՇՐԷՇ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Սանոյեանցի
1919

ՆԱՀԱՊԵՏ ԱՑՐԻԿԵԱՆ (լէկ–ր)

190537

# SUB DIVO

Հրատարակութիւն

ՇՐԷՇ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Սանոյեանցի

1919



11-21223ակ

## ԳԱՐՆԱՆ ԵՐԵԿՈՅ

Сусаниѣ Гетумовой

I

Բացուել են նորից հերիկները հեզ,
Բուրում է հողը, լուսավառ այնպէս.
Գարնան երեկոն իջնում է կամաց
Նրբանիւս ու լուրթ, սանդուղքներից թաց.
Սիրում է քեզ պէս երեկոն գարնան
Թովիչ, կոքէտ ես երեկւայ նման
Գարնան երեկոն իջնում է կամաց
Նրբանիւս ու լուրթ, սանդուղքներից թաց.

II

Թռչէք կը թուրծն հէրթկ ու անթեմ,
Քո սիրուն, բարակ, սանրուածքի պէս.
Ուզում եմ հիմա, որ քեզ պատահեմ
Անչափ, անսահման կարօտել եմ քեզ. .
Բուրում է գարնան երեկոն խոնեմ
Քո նուրբը, ծաղկուկէն հանդերձների պէս.
Ուզում եմ հիմա, որ քեզ պատահեմ
Անչափ, անսահման կարօտել եմ քեզ...

## ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ

Сарѣ Гришбейнъ

Տուիօլէտներ

I

Տուիօլէտ

Ես սիրում եմ ամարանոցը ոսկէհուռ
Տերևները, որ պայծառ են ոսկու պէս.
Քո աչքերը կապոյտ, խորունկ ու տխուր
Տերևները, որ պայծառ են ոսկու պէս.
Ես սիրում եմ համբոյրները քո աշնան
Հանդերձներդ, ա՛խ, անձրևից թրջուած
Ես սիրում եմ ամարանոցը ամպամած
Տերևները, որ տխուր են քեզ նման.

## II

Տուխօլէա

Թող աշունը խիստ նստել է իմ սրտում
Մինչև գարուն, ես կը մնամ այս գիւղում.
Հարազատ են ինձ տերևթափ ու աշուն
Մինչև գարուն ես կը մնամ այս տնում
Թող աշնան դէմ, աւելի ես դու սիրուն
Բարի Սառա, անչափ զիջող ու խոհուն
Թող աշունը խիստ նստել է իմ սրտում
Մինչև գարուն, ես կը մնամ այս այգում...



## III

Տուխոլէա

Ես թողնում եմ ամարանոցը այս, սպիտակ
Այս աշունը քեզ էլ արեց ցրտահար ..
Դու ուզում ես, նորից արև ու կրակ
Այս աշունը քեզ էլ արեց ցրտահար...
Դու խօսում ես, մխ, այնպէս կարճ ու կամաց
Համբուրում ես, այնպէս հիւանդ ու նիհար,
Որ թողնում եմ ամարանոցը տխրամած
Այս աշունը քեզ էլ Ֆրեց ցրտահար...

## ՕԿՏԱՎԻԱ

Катѣ Юзбашевой

Տխրամած ու ցուրտ, տերևթափ այգում
Պատահեցի ձեզ... Անձրև էր... Աշուն...
Ես սիրեցի ձեզ, փոքրիկ հասակում.
Երբ դուք դպրոցից գնում էիք տուն...
Մի քանի գիրք կար, ձեր պայուսակում -
Ու անմեղ սէրեր աչքերում սիրուն
Ես սիրեցի ձեզ, գունաթափ այգում
Երբ դուք դպրոցից գնում էիք տուն...



## ՍՕՆԷՏ

Урикѣ Шамчевой

Յիշում եմ ձեզ... Գիշեր էր. . Գարուն..,
Բուրում էր թովիչ ափը Արագի.
Ձեր մանդոլինը հնչում էր սիրուն
Նուագում էիք—«Սպիտակ Յարասի».
Տխրում է քաղաքը աշնան մաղձի տակ
Հոգիս գրկել է մի յոգնած թախիծ
Ես չեմ մոռացել ցարասին սպիտակ,
Ձեր մանդոլինը հնչում է նորից.
Սևամաղձ քամին, շնչում է հնչեղ
Նայում է արտը համր, դալկադէմ
Ու ես չեմ տխրում, որ ցուրտ է այստեղ
Որ չորացել են յասմիկ ու անթեմ.
—Ես յիշում եմ ձեզ... Արագը ձայնեղ
Ձեր գունատ դէմքը, մանդոլինի դէմ...

## ՄԵՆԱԿՈՒԹԻՒՆ

Зинѣ Киріацкой

I

Տխուր ու սպիտակ առաւօտ աշնան!
Իմ սիրտը մենակ, տխուր է ու պաղ.
Օտար, տխրամած մի գորշ քարաւան
Լուսամուտիս դէմ, շարժւում է դանդաղ.
Իմ սիրտը սիրեց մի կապոյտ կսկիծ
Նստեց իմ հոգում, տխրութիւն անյայտ.
Ուղտերը դեղին. դրկել են թախիծ
Այդ ինչ քարաւան, ինչ ուղտեր են այդ:



II

Մենակ եմ հիմա, հեռու ես անչափ
Չունեմ ես նամակ. քեզանից Զինա.
Քո նուէր տւած պատկերը անթափ
Թրջում եմ լացից, հեռաւոր Զինա.
—Չեմ կարող մտնել սենեակս մենակ
Գուրգուրող, սիրող ես չունեմ հիմա
Հեռու ես անչափ, չունեմ ես նամակ
Թրջում եմ լացից պատկերդ Զինա.

III

## ԿԱՅԱՐԱՆԻ ՄՈՏ

Տխրում եմ մենակ, արտասւում առատ
Այս ցուրտ, ձիւնամած, դաշտերի դիմաց.
Յիշում եմ մէկի դէմքը անարատ
Սիրում եմ մէկի ուղին ամպամած.
Գնացքը սահուն, թողել է թախիծ
Երկաթագծի սառնութեան վերայ
Դաշտերում սառոյց, անձրև է, կսկիծ
Ա՜խ, ես ի՞նչպէս տամ, անունդ հիմա...

## ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## „ԾՐԷԾ"

Տպագրւում են հայերէն ու ռուսերէն լեզուներով, հայ բանաստեղծների գրւածքները։

**ԼՈՅՍ ՏԵՍԱՆ**

1. Կարա-Դարւիշի (Յակովբ Գենջեան)—«Ով եմ ես»։
2. » „Пѣсни бунтующаго тѣла"
3. » «Кто я» -переводъ съ армянскаго Татьяны Вечорки
4. Նուէր Փէփրոնի (լէկար Ն. Աֆրիկեան)—«Երկնքից ընկած թերթիկներ»։
5. » Юность
6. » Sud Divo

Վաճառւում են—«Blane—Noir»-ում։

Հասցէն—Тифлисъ—«Blane—Noir», Головин. проспектъ.

-4000-

ՀՀ Ազգային գրադարան
NL1981060

3 ՌՈՒԲ.

II

21223